ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՍՏՂԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 405-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ՝ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Աստղիկ Մխիթարյանի դիմումի հիման վրա՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2022 թվականի հոկտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Աստղիկ Մխիթարյանի (այսուհետ՝ դիմող) դիմումը, որով դիմողը խնդրել է.

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին ու 63-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Ըստ դիմողի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է, որ անձը, դիմելով դատարան, պետք է կարողանա իր գործն ամբողջովին ներկայացնել թե՛ փաստական հիմքերի շրջանակներում, թե՛ իրավական հիմքերի ու հիմնավորումների տեսանկյունից: Հաշվի առնելով քաղաքացիա-

կան դատավարության առանձնահատկությունները՝ կողմերի հավասարության տեսանկյունից՝ գործը դատական տարբեր ատյաններում քննվելիս պետք է երաշխավորված լինի երկու կողմերի հավասարությունն առ այն, որ դատարանները համակողմանի քննեն կողմերի ներկայացրած փաստարկները և իրավական հիմնավորումները:

Դիմողի կարծիքով՝ «Արդյունավետ դատական պաշտպանությունը ենթադրում է, որ իրավական ակտը պետք է ամբողջովին վերանայվի, այլ ոչ թե՝ մի մասով: Ուստի Վճռաբեկ դատարանը, իրավակիրառ պրակտիկայում որպես իրավական ակտերի բովանդակային առումով վերջնական մեկնիչ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին հաղորդել է հակասահմանադրական բովանդակություն՝ անտեսելով Դիմողի՝ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները»:

Ըստ դիմողի՝ իր նկատմամբ կիրառված «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որով թույլատրվում է Վճռաբեկ դատարանին՝ բեկանելու և փոփոխելու վերաքննիչ դատարանի որոշումը, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, խախտել է դիմողի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով ու 63-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը: Դիմողի պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանը պարտավոր էր տվյալ դեպքում հաշվի առնել այն հանգամանքը, որ անձի նկատմամբ կարող է տեղի ունեցած լինել կամայական հետապնդում, ինչպես դա դիմողի կողմից նշվել է իր հայցադիմումում: Դիմողը պնդում է, որ Վճռաբեկ դատարանը, իհարկե, չէր կարող ինքնուրույն որոշել արդյո՞ք համապատասխան փաստ առկա է, թե ոչ, քանի որ Վճռաբեկ դատարանը ոչ թե փաստի, այլ իրավունքի դատարան է: Սակայն հենց այդ հանգամանքը հաշվի առնելով անհրաժեշտ էր գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, որպեսզի ապահովվեր դիմողի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացումը»:

Ըստ դիմողի՝ Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում հաղորդած բովանդակությամբ խախտել է իր՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով, 63-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև հաշվի չի առել Սահմանադրության 39-րդ հոդվածով երաշխավորված խտրականության արգելքը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

3.1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա/ երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ/ երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ/ երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանը 2010 թվականի հոկտեմբերի 19-ի ՍԴՈ-921 որոշման շրջանակներում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ ***կոնկրետ վերահսկողության շրջանակներում նորմի սահմանադրականության գնահատումն իմաստ ու նշանակություն է ստանում տվյալ կոնկրետ գործով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության առումով:***

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրվել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:***

(…)

(…) *անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ,* ***թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:***

Սահմանադրական դատարանը վերը նշված ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով*

իրավաբանորեն հիմնավորել, թե ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (...)»:***

Սահմանադրական դատարանը փաստում է, որ անհատական դիմումներին ներկայացվող վերոգրյալ պահանջները սույն դիմումում պահպանված չեն: **Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին ներկայացվող հիմնավորվածության պահանջը, համաձայն որի՝ ի թիվս այլնի, դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի՝ առանց ներկայացնելու պատճառահետևանքային կապը վիճարկվող օրինադրույթների և ենթադրյալ խախտման փաստի միջև բավարար հիմնավորումներ:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն անհատական դիմումում դիմողը հղում է կատարում Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին և 63-րդ հոդվածի 1-ին մասին, սակայն չի ներկայացնում բավարար հիմնավորումներ, թե ինչպես է վիճարկվող նորմին տրված մեկնաբանությունը խախտում իր դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, այսինքն՝ չի ներկայացնում վիճարկվող նորմին հաղորդած մեկնաբանության և իր իրավունքների հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը: Ավելին՝ դիմողը չի մատնանշում, թե ինչպիսի մեկնաբանություն է տրվել քննության առարկա նորմին, այլ սահմանափակվում է միայն «վիճարկվող նորմին տրված մեկնաբանություն» ձևակերպմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիմա վրա գործի քննության ընդունումը ենթակա է

մերժման «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա:

3.2. Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ (և հետագայում 13.11.2012թ. ՍԴԱՈ-80, 08.04.2014թ. ՍԴԱՈ-13, 07.04.2015թ. ՍԴԱՈ-19, ինչպես նաև 05.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-4, 18.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-5, 21.03.2016թ. ՍԴԴԿՈ/1-9, 02.04.2016թ. ՍԴԴԿՈ/1-13 և այլ որոշումներով վերահաստատված) իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «(...) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (...), ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրված են Սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու հիմքերը: Մասնավորապես՝ նշված օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե **դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին**:

Սույն դիմումի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմողի հիմնական դժգոհությունը պայմանավորված է Վճռաբեկ դատարանի կողմից իր նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառմամբ, համաձայն որի, վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքի քննության արդյունքով Վճռաբեկ դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Մասնավորապես՝ դիմողը նշում է հետևյալը. «Վճռաբեկ դատարանը պարտավոր էր տվյալ դեպքում հաշվի առնել այն հանգա-

մանքը, որ անձի նկատմամբ կարող է տեղի ունեցած լինել կամայական հետապնդում, ինչպես դա Դիմողի կողմից նշվել է իր հայցադիմումում: Դիմողը պնդում է, որ Վճռաբեկ դատարանը, իհարկե, չէր կարող ինքնուրույն որոշել արդյոք համապատասխան փաստ առկա է, թե ոչ, քանի որ Վճռաբեկ դատարանը ոչ թե փաստի, այլ իրավունքի դատարան է: **Սակայն հե՛նց այդ հանգամանքը հաշվի առնելով անհրաժեշտ էր գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, որպեսզի ապահովվեր Դիմողի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրացումը**»:

«Վերոնշյալից զատ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տվյալ գործում խոսք է գնում նաև խտրական վերաբերմունքի մասին, ինչն արգելված է Սահմանադրության 29-րդ հոդվածով, և որն իր արտացոլումն է ստացել նաև Աշխատանքային օրենսգրքի 114-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետում (...)»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը ձևականորեն խոսելով վկայակոչված նորմին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության մասին, իրականում բարձրացնում է իր նկատմամբ ընդունված դատական ակտերի իրավաչափության, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի կողմից իր նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման իրավաչափության հարց, ինչի գնահատումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից, հետևաբար՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Աստղիկ Մխիթարյանի դիմումի հիման վրա՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ իրավակիրառ

պրակտիկայում տրված մեկնաբանությամբ՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

29 նոյեմբերի 2022 թվականի
ՍԴԱՈ-197